ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«01» հուլիսի 2021թ. № 266

ԱՐՏԱՇԵՍ ՄԱՆՎԵԼԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով, 219[1]-րդ և 281-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, հիմք ընդունելով Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Արման Ավետիսյանի և Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի գլխավոր մասնագետ Գարիկ Աբգարյանի կողմից 2021 թվականի հունիսի 7-ին կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի բնակիչ Արտաշես Մանվելի Սարգսյանն իրեն սեփականության իրավունքով պատկանող՝ «ք. Սպիտակ, Ս. Ավետիսյան փող., թիվ 60» հասցեում գտնվող հողամասում ինքնակամ կառուցել է շինություն՝ ***որոշում եմ.***

1. Արտաշես Մանվելի Սարգսյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ նրա նկատմամբ նշանակել տուգանք նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով՝ երկու հարյուր հազար ՀՀ դրամ:

2. Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության բաժնին՝ սույն որոշումը սահմանված կարգով և ժամկետում հանձնել Արտաշես Մանվելի Սարգսյանին:

3. Արտաշես Մանվելի Սարգսյանին՝ ընդունել ի գիտություն, որ սույն որոշմամբ նշանակված տուգանքը ենթակա է վճարման որոշումն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արտաշես Մանվելի Սարգսյանին իրազեկելուն հաջորդող օրվանից:

5. Սույն որոշումը վարչական կարգով կարող է բողոքարկվել որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից երեսուն օրվա ընթացքում կամ դատական կարգով՝ երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. հուլիսի 1
ք. Սպիտակ